Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-831[1]-18.02.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 206.3 հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 206.5 հոդվածի վերնագիրը և դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը».

Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խաչընդոտելը՝»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել նոր 206.9-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 206.9. Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը՝

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը, (բացառությամբ՝ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիա-իրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսյա ժամկետում քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «206.3» թվերը փոխարինել «206.9» թվերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ կառավարություն և Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյան	I. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ. 1. Նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 353-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է վերախմբագրել՝ առանձնացնելով պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար նախատեսված պատասխանատվությունը կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից նույն արարքի կատարման համար նախատեսող պատասխանատվությունից և այդ դրույթները սահմանել նույն հոդվածի տարբեր մասերով: 2. Նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 353-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել դատական ակտի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ դրույթները, միաժամանակ 353-րդ հոդվածում անհրաժեշտ է դրույթներ նախատեսել դատական ակտի՝ որոշակի ժամկետներում չկատարելու համար սահմանվող պատասխանատվության մասին: II. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում	Ընդունվել է. Ընդունվել է.	Նախագծի 1-ին հոդվածում Առանձնացվել են պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար նախատեսված պատասխանատվությանը վերաբերող դրույթները կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից նույն արարքի կատարման համար նախատեսող պատասխանատվությունից և այդ դրույթները սահմանել նույն հոդվածի տարբեր մասերով: Նախագծի 1-ին հոդվածից հանվել են խոչընդոտելու վերաբերյալ բոլոր դրույթները, և սահմանվել է հստակ ժամկետ դատական ակտը չկատարելու դեպքում պատասխանատվություն կիրառելու համար:

	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ. 1. Նախագիծի վերաբերյալ հայտնում ենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 206.5-րդ հոդվածի վերնագիրը և դիսպոզիցիան անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը» և «Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խաչընդոտելը՝»՝ նկատի ունենալով այն, որ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 206.9-րդ հոդվածով արդեն իսկ կարգավորվում են ակտը դիտավորությամբ չկատարելու հետ կապված հարաբերությունները, ուստի առաջարկվող փոփոխության չկատարման դեպքում կառաջանա միևնույն արարքի համար օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակի պատասխանատվության հիմք և հնարավորություն: 2. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 206.9-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել դատական ակտի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ դրույթները, միաժամանակ 206.9-րդ հոդվածում անհրաժեշտ է դրույթներ նախատեսել դատական ակտի՝ որոշակի ժամկետներում չկատարելու համար սահմանվող պատասխանատվության մասին:	Ընդունվել է. Ընդունվել է.	Նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով. «Հոդված 2. Օրենսգրքի 206.5 հոդվածի վերնագիրը և դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը». Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խաչընդոտելը՝»: Նախագծի 3-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: «Հոդված 206.9. Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը՝ Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը, (բացառությամբ՝ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիա-իրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսյա ժամկետում քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից

			հարյուրապատիկի չափով:»: